ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«05» ապրիլի 2018թ. № 138-Հ

ՀՐԱՄԱՆ

«ՍԱԲԱՐԿՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-ԻՆ ՏՐՎԱԾ ԹԻՎ ՎԽ-024 ՎԻՃԱԿԱԽԱՂԻ ԿԱՄԱԿԵՐՊՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԽԱԽՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2018 թվականի փետրվարի 27-ի թիվ 68-Ա հրամանի հրամանի հիման վրա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից իրականացված «Սաբարկո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 2016 թվականի դեկտեմբերի 29-ին տրված թիվ ՎԽ-024 վիճակախաղի կազմակերպման լիցենզիայի պայմանների և պահանջների կատարման ստուգման արդյունքում 2018 թվականի մարտի 23-ին կազմված թիվ ՎԽ-01 ակտը, 2018 թվականի ապրիլի 05-ին կայացած վիճակախաղերի, շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների լիցենզավորող հանձնաժողովի նիստի եզրակացությունը, ղեկավարվելով «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2004 թվականի դեկտեմբերի 15-ի պաշտոնական պազաբանումով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 18-ի թիվ 503-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 11-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթներով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Արձանագրել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 2016 թվականի դեկտեմբերի 29-ին «Սաբարկո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրված թիվ վխ-024 վիճակախաղի կամակերպման լիցենզիայի գործողության կասեցման համար հիմք հանդիսացող խախտման կատարում:

2. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ այն ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:

Վ. ԱՐԱՄՅԱՆ